

# ՄԱՐԱՆԻ ԴԵՂԱՊԵՏԸ

Ամառնային շոգ օր էր. տօթը խեղդում էր, մի ծառի տերև, մի խոտի թերթիկ չէր շարժում. թեթև զեփիւռ անդամ չէր խաղում, որ տոշորոտղ մարմիններին վայրկենական զովութիւն բերէր:

Եւ այդ ժամանակ Ծուփկենց բակի պատի ստուերում, հնամաշ թաղիքի վրայ փոռւած, աղքատիկ անկողնու մէջ շնչասպառ անքում էր մի հիւանդ կին. դա ընտանիքի մայրն էր, Ծուփկենց Մարանը:

Երկու ամբողջ ամիս էր անցել այն օրից, երբ Մարանը գլուխը բարձին էր դրել: Ծանր հիւանդութիւնը իսպառ հալ ու մաշ էր արել նրա վաղեմի առոյդ կազմուածքը. նրա թուխ գէմքի կաշին փափկել, նրբացել ու գեղին մոմի գոյն էր ստացել. իսկ հիւծուած մարմնի բարակ մորթու տակ զանազան տեղում դուրս էին ցցուել սուր անկիւններով հալուած ոսկորներ, որոնց երեսից նշամարւում էին կապուտակ երակների բազմաւեսակ ճիւղաւորութիւնները:

Երեւի կէսօրուայ խեղդող տօթը շատ էր նեղում Մարանին. նա պառկած էր մէջքի վրայ խուփ աչքերով և բերանը լայն բացած արագ արագ հեւում էր: Հիւանդի գլուխը թոյլ թոյլ ընկած էր անլուայ բարձի վրայ. ոսկրացած բազուկները տարածուած էին վերմակից դուրս աջ ու ձախ, իսկ կիսամերկ կրծքի չորացած տախտակը հեւոցի հետ մեղմօրէն բարձրանում ու իջնում էր:

Մարանի դլսավերեւը, գտակը յօնքերին քաշած նստած էր Յարութը, նրա ամուսինը, որը հիւանդապահի գեր էր կատարում: Ուռենու գալար ճիւղերից կազմած մի փունջ ունէր նա ձեռին, որ անդադար տարուբերելով հիւանդի երեսի վրայով, թէ ճանճերին էր հալածում և թէ մեղմիկ քամի առաջացնելով, ցաւատանջ ամուսնու տօթախորով դէմքին թեթև զովութիւն բերում:

Լուռ էր Յարութը և ախուր, նրա կոպիտ արեւառ գէմքը պատած էր վշտի խոր կնճիռներով: Ի՞նչ անէր խեղճը. ախար հեշտ բան չէր նրա պէս անճար աղքատի համար սազ շաբաթներով բան ու գործ թողած տանը վեր ընկնել ու հիւանդի հետ մաշուել, արորուել: Բայց նա արեց այդ զօհողութիւնը, արեց, որովհետեւ սիրելի ու թանկ էր նրա համար վերմակի տակ գալարուող հիւծուած հիւանդը, որովհետեւ շատ մեծ էր նրա տան վրայ Մարանի ունեցած հոգան ու երախտիքը: Եւ Յարութը ձեռքից եկածը չը խնայեց իր թանկագին կողակցին առողջացնելու համար: Երջակալը ու սրբավայր ու ուխտատեղ, էլ ժամ ու մատուռ չէր մնացել, որոնք անմաս լինէին Յարութի ջերմեւանդ սրտից բղխող մոմ ու մատաղից, բայց մահուան հրեշտակի ճիրաններում տառապող գժբախտ հիւանդին և ոչ մի կողմից փրկութիւն չեկաւ: Գաւառում գտնուող բոլոր հնարագէտ գալլարները, բժշկական հմտութեամբ հոչակուած պառաւներն ու մինչեւ անգամ գրբաց մօլլաներն ու սօղոմնագէտ ախրացուները, բոլորն էլ փորձել էին Մարանի վրայ իրանց գիտութեան բուժարար ոյժը, բայց և ոչ մէկը չէր մեղմացրել սոսկալի ցափի տանջանքը: Ցաւն անբուժելի է.— այսպէս էր նրանց վերջնական եղակացութիւնը: Եւ այդ անողոր վճիռը Յարութին յայտնողը եղաւ մի պատկառելի նետագիր պառաւ, որը վերջում արտասուրը սրբելով աւելացրեց. «Մարանի վրկութիւնը մընաց գեղապեսին. թէ նրան ճար լինի, գեղապետը պի-

տի լինի, թէ չէ, որ Լոզմանն էլ գերեղմանիցը դուրս գայ, էլի չի կարող նրան ազատել»:

Պառաւի այդ անսիրտ յայտարարութիւնը սուր կացնի հարուածի ներգործութիւն ունեցաւ Յարութի վրայ. նրա ողնաշարը կասես մէջտեղից կոտրուեց, նրա գլուխը քաշ ընկաւ կրծքին և նա սկսեց գառնագին հեկեկալ. Գուժաբեր պառաւը հեռացաւ, բայց Յարութի բորբոքուած աչքերից բղխող աղի արցունքի խոշոր կաթելները գեռ երկար երկար թրջում էին հնամաշ թաղթեի խունացած նաշխերը և աղեկտուր հեկեկանք ըերի ընդհատ հնչիւնները մինչեւ երեկոյ լուսում էին խարխուկ խրճիթի սև խաւարի մէջ:

Վերջապէս, առատ արցունքը փոքր ինչ հովացրեց Յարութի այրուող սիրտը. նա չուխի թեւով աչքերը սրբեց և սկսեց ինքն իրան միտթարել ու սիրտ տալ: Զէ որ պառաւը գեռ նրա սրտում յոյսի մի փոքրիկ կտոր էր թողել՝ գեղապետը, եր ֆրկարար զօրութեամբ—ուրեմն գեռ մնում էր էլի մի շիւլ, որից կարող էր բռնել վշտերի ծովում խեղդուող թշուառը:

Եւ այդ օրուանից Յարութը ամեն կերպ աշխատում էր լսել Մարանի բերանից թէ ինչն է նրա սրտով ուզած գեղապետը. ինչնվ կը կամենար նրա բազմատանջ կեանքի այդ հաւատարիմ ընկերը վերջին անգամ թրջել իր այրուած ու տապակուած լեզուն. «Մարան ջան, անունիդ մեռնեմ, ախր մի ասա սիրտդ ինչ ա ուզում, ինչ կուզես ուտել, —բազկալի սպաս, լաւ ոսպախաշու, կանաչ պօլօնիկ. բացախով գանդուռ, աշխանի շորվա, նոր խեցած ծիրան, կամ թթուաշ ինձոր. որ մէկից կուզես արկեիդ մատաղ»: Այս հարցերը օրական տասն անգամ կրկնում էր Յարութը. և անթարթ աչքերը ամուսնու երեսին ուզգած՝ ամբողջ ժամերով նայում էր նրան ու պատասխանի սպասում. բայց խզուր... Մարանը չէր պատասխանում. նա երբեմն միայն ցաւալի ճրբոցով ոսկրացած մէջքի տեղն էր փոխում ու կարմրատակած աչքերը. կիսով չափ բանալով,

պապանձուած շրթունքներն էր կամացուկ շրպպացնում.  
դա նշան էր որ հիւանդը ջուր է ուզում:

Յարութը շտապով հիւանդի չորացած բերնին  
էր մօտեցնում սառը ջրով լիրը փարչը, որից յետոյ  
Մարանի գլուխը կրկին բարձի վրայ էր ընկնում. և  
հիւանդը կրծքից դուրս խուժող օդի առատ հոսանքը  
մի սրտամաշ «օֆ» էր առաջացնում: Այնուհետև էլի  
նոյն սպանիչ լուսութիւնը, էլի հիւանդի միօրինակ ան-  
շարժութիւնը և յուսահատ Յարութի խեղդուղ հեկե-  
կանքը:

Ահա այս դրութիւնն էր տիրում Ծուեկենց բակում,  
երբ դարբասի ջախլախ դուռը աղմկալի շառաչիւնով  
յետ գնաց ու փոքրիկ Աւէտը կանաչ խոտը կանա-  
տակին թռչկոտալով ներս եկաւ: Դա Յարութի տղան  
էր, որ իր քոյր Սաթօի հետ այգուցն էր վերագառ-  
նում:

—Հայրիկ, —դոռաց Աւէտը դեռ բակի շէմքից, —  
պօրինջան են ծախում, պօրինջան, տեսել ես, կարմիր  
պօրինջան. Էն որ անցեալ տարի քեռոնց այգում խո-  
ռովեցինք հա. լաւն էր, թթուաշ...

Եւ երեխան բերած խոտը բառաչող հորթի առա-  
ջին ածելով, սկսեց շոյել փոքրիկ կենդանու սիրուն  
ճակատը:

Կայտառ մանկան առողջ կրծքից դուրս թռած  
բարձր ճիշը սթափեցրեց հիւանդին, նա կողքի վրայ  
շրջուեց, ծանր ճրաց, յետոյ աչքերը բացեց, փորձեց  
նստել:

Ուրախացած Յարութը նստացրեց հիւանդին և  
նրա թիկունքի յետելը մի կորած թաղիք դրեց, ուին  
յենուել կարողանար Մարանի թռւլացած մէջքը:

Մարանը մի քանի բերան սնքաց, մէկ էլ նորից  
հառաչեց, յետոյ իր լախացած բիբերի սարսափելի  
հայեացքը ամուսնու երեխին յառելով դժուարութեամբ  
արտասանեց՝ Յարութ...

—Զանի, —սրտապատառ ուրախութեամբ պատաս-

խանեց Յարութը, —ինչ ես ուզում, անունիդ մեռնեմ, բազկալի սպաս, լաւ ոսպախաշու, կանաչ պղոծիկ... և այսպէս նա պիտի վերջացնէր իր սիրելի ուտելիքների ամբողջ ցուցակը, եթէ հիւանդի երեսի զգուանը արտայայտող կնճիռները և ձեռի բացասական շարժումը չը ստիպէին նրան լոել։ Ըստ երևոյթին Մարանը չէր ուզում լսել հազար ու մի անգամ կրկնուած այդ անտանելի բառերը։

—Յարնւթ ջան, —կրկնեց նա փոքր ինչ բարձր և ապա, խօսքը շարունակելու համար, իր հիւանդ կրծքի բոլոր զօրութեամբ օդի պաշարներ շնչեց։

Այս անգամ Յարութը լուռ էր և ականջը հիւանդի շրթունքներին մօտեցրած իր ամբողջ էութեամբ լսողութիւն էր դառնել։

—Պօրինչան, —չնչասպառուելով վանկ վանկ մրմրնաց Մարանը, —կարմիր պօրինչան, —կրկնեց նա դողդուն ձայնով, և իր բորբոքուած աչքերի աղերսական հայեացը ուղիղ ամուսնու ճակատին մեխեց։

Հիւանդը գոււարանում էր երկար խօսել, բայց նրա խղճալի հայեացը պարզ ասում էր. «Հը», այս չորացած շրթունքներին կարծի ես հասցնել իմ դեղապետը, թէ պիտի հոգուդ վրայ պարտ թողնես իմ վերջին արտասուելիքը»։

—Ես րոպէիս կը բերեմ, —յուզմունքից դողացող ձայնով բացականչեց Յարութը. և տեղից վեր թռաւ ու դէպի գոււը վաղեց, բայց նա դեռ դրան շէմքին չէր հասել, որ յանկարծ ձեռը գրպանը տարաւ, և մնաց տեղում արձանացած. խեղճի քսակը բոլորովին դատարկ էր...

Այսպէս մի րոպէ նա մնաց ձեռը գրպանում շուարած կանգնած, բայց յետոյ նրա գլխում մի յուսատու միտք ծագեց. —գուցէ յաջողուէր ապառիկ բերել, և նա դառնալով որդուն հարցրեց.

—Աւէտ, այ Աւէտ, ով էր ծախում պօրինչանը։

— Իւանենց Պապիկը, Էնքան լաւն էր, — հրճուանքով վրայ բերեց երեխան։

Բայց պատասխանը դուր չ'եկաւ Յարութին։ Պապիկը էն պտուղը չէր որ ապառիկ բան ծախէր։ Հարկաւոր էր մի հնար անել, և նա եղունգները կրծուելով կանգնել էր Մարանի գլխավերեւը ու իր ուզեղի ամբողջ ոյժը լարած աշխատում էր մի ճար գտնել՝ որ դեղապետը հիւանդին հասցնի։

Հիւանդը իր կախուած գլուխը բարձրացրեց և յօնքերի տակից ամուսնու երեսին նայելով արտասանեց։  
— Բերիր։

— Հա, բերում եմ, էս րոպեիս, — շշկուելով պատասխանեց Յարութը, և սկսեց կանգնած տեղում ինչ որ աննպատակ շարժումներ գործել. յետոյ գաւնալով աղջկանը, ասաց։

— Աղջի Սամթօ, ինչ էի ասում... հա... մի շնր, պօրինջանի համար շոր առւր, շնր։ Աղջիկը բերեց շորը, բայց հայրը դեռ չէր շարժում։

Մարանը մէկ էլ նայեց ամուսնուն, և տեսնելով նրա շփոթմունքը հարցրեց։

— Յարութ, այ Յարութ, փող ունիս, փնդ։

— Փնդ... ասենք... հեշտ ա հեշտ, մի տեղից կը ճարեմ, — լեզուն ծամծմելով պատասխանեց նա, թէեւ ոչ մի տեղից փող ճարելու յօյս չունէր։

Հիւանդի ճարճարուած շրթունքները միմեանց մօտեցան, բերանի մկանունքները ձգուեցին և նրա այլակերպուած դէմքի սոկոս մակերեւոյթի վրայ ժպիտի պէս մի բան նշմարաւեց. բայց որքան դառը, որքան կծու էր այդ սպանիչ ժպիտը, կասես թէ թոյն էր կաթում նրանից։

Մարանը հառաչեց ու աչքերը երկնքին յառելով մի բան մրմնաց. անէծք էր դա, թէ ազօթք—շմացուեց, բայց ցաւոտ թոքերի փորքից գուրս վիժող երակար հազի մէջ խեղդուեցին նրա վերջին բառերը։

Հազարուց յետոյ Մարանը նշանացի կանչեց աղջը-

կանը, և նրան ականջին ծանր հեւալով ինչ որ բան ասացի Սաթօն հեռացաւ և երկու րոպէից յետոյ վերագառնալով, մի փաթեթ բերեց ու յանձնեց մօրը:

Յարութը ճանաչեց փաթեթը, դա Մարանի բաժինքի ամենալաւ դաւլուղն էր, որ կարուած էր զանազան վառ գոյնի շալերից ու մետաքսի գործուածքների մանր կտորտանքներից:

Հիւանդը առաւ նախշուն զաւուզը, գանդազութեամի շուռ է շուռ տուեց իր ցամաքած ձեռների մէջ և սրտի խորքից մի հոգոց արձակեց: Ո՞վ գիտէ ինչ քաղցր յիշողութիւններ, ինչ սիրուն պատկերներ վերակենացան այդ վայրկեանին տարաբախտ կնոջ մոլորուած մտքում: Զէ որ նրա անցեալի կարմիր օրերի հետ էր կապուած այդ նուիրական զաւուզի սիրելի պատմութիւնը:

Մարանը իր հալուած մատների բոլոր ոյժը լարելով արձակեց զաւուզի կապը, յետ տուեց փաթոյթը և նրա արանցից վարդագոյն շթում կապած մի փոքրիկ բան հանելով, մեկնեց Յարութին: Վերջինս առաւ, քանդեց նրա ամուր կապը և ինչ... մի պսափիկ շողշողուն արծաթէ դրամ մի հատ տաս կոպէկանոց:

— Ճար,—մըմնջաց հիւանդը, յոդնած գլուխը բարձին գցելով.—տար ինձ համար պօրինջան բեր, ախ սրտով ուղում եմ,—աւելացրեց նա ու ցամաքած, պուօշները շրջպացրեց: Խոկ Յարութը չէր շտապում: Նա կանգնած էր նոյն տեղում և փոքրիկ դրամը մատների մէջ խաղացնելով, կասես զուարճանում էր նրա փայլով: Բայց խոկապէս նա տանջւում էր, դառը մըտքերը խեղդում էին նրան և վրդովուած խիղճը չարաչար գալարում էր նրա ներսում: Յարութը յիշեց որ այս դրամը ինըն էր ընծայել Մարանին նոր նշանուած ժամանակ և հէնց այն օրը, երբ նրան յաջողուել էր առաջին սիրային համբայրը քաղել սիրուն նշանածի ալվարդ թշերից: «Հէյ գիտի, անցած օրեր» շշնջաց նա

ատամների արանքից և այնուհետեւ մտաբերեց, թէ քանի անդամ էր տեսել, երբ իսեղն Մարանը իր այդ թանկագին դանձը հանում էր մնդուկից, սրբում, պըս-պըղացնում, մի փոքր զուարճանում և նորից մնդուկի ապահով անկիւնում թագցնում:

Յարութիւն ձեռը չէր զօրում այդ փողը ծախսելու. Նրա խիղճը բողոքում էր, որ տամնեակ տարիների ընթացքում այնքան ինամբով ու գուրդուրանքով պահուած փոքրիկ դրամը իր մահամերձ տիրոջ վերջին սրտուղելիքի վրայ գործադրուիւ Ոչ, դա կը լինէր Յարութիւն կողմից մի աններելի ապերախտութիւն, մի անսիրու ու ստոր վարմունք, և ի հարկէ, նա ոչ մի կերպ չի հաշտուի այդ մտքի հետ. նա կը հանի իր հագի չուխէն, գրաւ կը դնի նրան, կը ծախի գտակը ու նրա փողով իր բաղմաշխատ ամուսնու համար գեղապետ կը գնի. իսկ այդ փոքրիկ պսպղուն դրամը էլի սունդուկի խոր անկիւնում կը պահուի.

—Ա՛յս պօրինջան,—շշնջաց Մարանը և լայնացած բիրերի սարսափելի հայեացը Յարութիւն երեսին ուղղեց,—շնուր արէք,—աւելացը նա, —թէ չէ անդեղաւ պետ կը մեռնեմ...

Վերջին խօսքերը կասես ծակեցին Յարութիւնի սիրուը, այլ եւս անկարելի էր սպասել. նա արագութեամբ երեսը շուռ տուեց և շտապով բակից դուրս եկաւ:

Յարութիւն փոքրիկ տղան, սիրուն հօրթուկը թողած, հօր յետեւից թռչկոտալով դուրս վագեց, իսկ Սաթօն սկսեց օջախը վառել, որ մինչեւ պօրինջանը բերելը, կը պատրաստ լինիւ:

Յարութը փոքրիկ դրամը պաղնցում սեղմած անհաստատ բայլերով առաջանում էր դէպի Իլանենց Պապիկի խանութը և ճանապարհին մտածում. «Ի՞նչ անեմ; Էս բոպէիս ես ում դիմեմ, որտեղից մի երկու ֆունտ պօրինջանի փող գտնեմ...»: Յանկարծ նա կանգ առաւ, մատը բերանը դրեց և սկսեց մտքում այսպէս դատել. «Բայց ի՞նչ պիտի լինի, եթէ ես էս փողով պօրինջան

առնեմ, իսկ էգուց կամ էլօր երբ որ ձեռս փող ընկնի, Մարանի դրամը իրան վերադարձնեմ. չէ որ միեւնոյն բանը կը լինի»:

— Ի հարկէ, միեւնոյն բանն ա,— համարեա լսելի ձայնով արտասանեց Յարութը և այս անդամ հաստատուն քայլերով մօտեցաւ Պապիկին:

— Բարի օր, Պապիկ:

— Բարով,— կիսաբերան պատասխանեց խանութպանը, աչքի պոչով նայելով իր անեղ մուշտարուն:

— Պօրինջան ունիս:

— Շատ, բայց քո ուտելու ժամանակը չէ, ախտէք Յարութը:

— Ինչու, ֆունտը քանի՞ արժի:

— Հինգ կոպէկ:

— Օ՞ծ, ինչ թանկ ես ծախում,— ակամայ վրայ բերեց Յարութը:

— Բաս դու ինչպէս էիր ուզում. փութը հինգ կոպէկ, համ, դէ, դէ քաշուիր, գնա բանիդ, դուռը մի կտրի շոդ ա:

Բայց Յարութը չէր հեռանում, ընդհակառակը նա մօտեցաւ պօրինջանի սալակին և սկսեց ջոկջոկատել նրա միջի լաւերը:

Խանութպանը զարմացած աչքերով ոտից գլուխ չափչում էր Յարութին:

Այդ ժամանակ, երբ Յարութը գլուխը կախ՝ զբաղուած էր պօրինջանը ջոկելով, խանութի դռանը մօտեցաւ մի ալեղարդ ծերունի: Երեցփոխ Պետրոսն էր դա. դիւզի առաջնակարդ իշխաններից մէկը, թէեւ եկեղեցական գումարների ուզդիդ երեք քառորդը գողացել էր:

Երեցփոխ Պետրոսը մի խստասիրտ ու հոգեհան վաշխառու էր. դա այնպիսի մի հրէշ էր, որ ձեռն ընկածին էլ բաց չէր թողնի, մինչեւ որ նրա արեան վերջին կաթիլը չը ծծէր: Ով նրանից մի բանի ոռորդի պարտք վերցնէր տարիներով պիտի տառապէր, որդէց որդի պիտի հալուէր ու մաշուէր նրա անիծուած դաւ-

քարի սոսկալի ծանրութեան տակ: Այսպէս համարեա  
ամբողջ գիւղը տնքում էր այդ անիրաւ մարդու առհելի  
ճիրաններում:

— Բարի աշօղում, Պապիկ, տօսց երեցփոխանը  
խանութի չէմքից ներս մտիկ տալով:

— Այ հազար ու հազար բարով, պատասխանեց Պետ-  
րոսը ստքի ելնելով:

— Էս ինչ ա, մեր տղայ, նուբար ես բերել, հա՞-

— Հրաման քեզ, կարմիր պօրինչան ա,—սարկական  
ժպիտը շըթունքներին պատասխանեց Պապիկը:

— Ի՞նչ արժի փունալք:

— Հինգ կոպէկ:

— Պա, պա, պա, պա, —սարսափով բայցական-  
չեց երեցփոխը և երեսը շուռ տալով անսօփոր արա-  
գութեամբ հեռացաւ այնտեղից:

Բայց մի բոպէից յետոյ նա կրկին յետ դարձաւ և  
խանութի դռանը մօտենալով ուշի ուշով ներս նայեց:

Յարութը թիկունքը դունը դարձրած դեռ շա-  
րունակում էր իր գործը «Փունտը հինգ կոպէկ ա, հեշտ  
բան չի» մտածում էր նա, և աշխատում էր ընտրել  
պօրինչաններից այնպիսիները որ համ կարմրած լինէին,  
համ խոշոր, համ կլոր:

Երեցփոխը իր ծերացած բիբերի բոլոր զօրութիւնը  
լարած՝ երկար ժամանակ նայելով, աշխատում էր ճա-  
նաչել Պապիկի մուշաբարուն, բայց չը կարողացաւ:

Վերջը նա Պապիկի փէշը ձգեց ու հաղիւ լսելի  
ձայնով հարցրեց. «Էդ ո՞վ ա»:

— Յարութն ա,—պատասխանեց Պապիկը բաւական  
բարձր ձայնով:

Երեցփոխը աչքերը կուչ ածեց ու գլուխը հարցա-  
կանօրէն շարժեց «՞ո՞ Յարութը» ուզում էր ասել նա:

— Ծուիկենց Վարդանի տղին, — համարեա գոռոցով  
պատասխանեց Պապիկը:

Յարութը յետ նայեց, տեսաւ չէմքում ցցուած  
Պետրոսին և նրա սիրտը մի տեսակ ալէկոծուեց: Նա

դդաց, որ երեսը կարմիւտափեց ու ականչննը տաքա-  
ցան, բայց թէ ինչու, չը կարողացաւ խմանալ:

—Ծուիկենց Յարութը, —ծորելով, կրկնեց երէցփոխը  
և քթի տակ մրթմրթալով հեռացաւ դռնից, նա նըս-  
տեց առուի կողքի ուսենու շուաքում և շրթունքները  
կրծոտելով մի հաստ և կարճ պապիրոս փաթաթեց:

Շուտով Պապիկի խանութից գուրս թռաւ Աւէտը  
և ջլրիդի երգելով ու փորին բարձրածայն թմբկահա-  
րելով առաջ վազեց:

Որդու յետեւից գուրս եկաւ Յարութը, պօրինջանը  
չուխի փէշում բռնած:

Նա հեռուիդ նկատեց երէցփոխի գարշելի կեր-  
պարանքը, որ առուի կողքին՝ ճանապարհի վրայ պըպը-  
զած բուլա բուլա բաց էր թողնում պապիրոսի գառը  
ծուխը:

Յարութին պատեց մի տխուր նախազգացում. և  
նրա սիրտը սկսեց անսովոր արագութեամբ բարախել.  
որքան տւելի էր նա մօտենում Պետրոսին, այնքան  
աստկանում էր սրտի թրամացը և ոտները ակամայ  
սկսում էին թուլանալ:

Մէկ նա մտածեց յետ գառնալ և ճանապարհը  
ծուել, որպէս զի երէցփոխի ատելի երեսին չը հանդիւ-  
պի, բայց տեսաւ որ արդէն ուշ է, քանի որ շատ էր  
մօտեցել Պետրոսին:

Նա գլուխը կախեց, աչքերը գետին յառեց և որ-  
քան կարող էր քայլերն արագացըց:

Սյուր բոպէին նա սովորական անցորդների պէս չէր  
գնում, այլ ուզզակի վազում էր, սրտապատառ փախ-  
չում, կասես մէկը հրացանը կրծքին սեղմած նշան էր  
բռնել նրան:

Բայց ի՞նչ, չը նայելով գործ գրած բոլոր ջանքե-  
րին, նա չը կարողացաւ խուսափել վերահաս վտանգից  
և դեռ նոր էր ուզում անցնել անողոք վաշխառուի  
առջեւից, երբ կողքից հնչեց երէցփոխի խրոխտ ձայնը.

—Յարութ:

Եւ այդ մի հատիկ բառը կասես շանթահար արեց Յարութին։ Նա կուզէր չը լսելուն տար այդ բառը, կուզէր երեխայի պէս վաղելով փախչել և որբան կարելի է շուտ տուն հասնել, բայց ոտները թուլացան, ծնկները ծալուեցին ու նա մնաց տեղում մեխուած։

—Յարութ, —կրկնեց Պետրոսը —էստեղ արի, բան եմ ասում։

—Դամ, —խղճալի եղանակով պատասխանեց Յարութը և յուզմունքից դողացող ձայնով կանչեց իր առջեւից վաղող Աւէտին։

Երեխան լսեց իր անունը և փողոցի ոլորանից յետ գառնալով մինչև հօր մօտը՝ մի չնչի վաղեց։

—Պօրինջանը տար տուր մօրդ, —կամացուկ ասաց Յարութը որդուն և չուխի փէշը մեկնեց դէպի նա։

—Լաւ, լաւ, —աղաղակեց Երեխան ուրախութեամբ և իր թաղիքէ փոքրիկ դատակը գլխից առնելով բռնեց հօր առջև, որ պօրինջանը նրա մէջ լցնէ։

—Է՛՛է, բղաւեց Երեցփոխը և իր հասակին անպատշաճ արագութեամբ տեղից ցատկելով, վաղեց դէպի Յարութը։

—Մի դատարկի, —շարունակեց նա Յարութի կուռը բռնելով, կաց, հէնց սրա համար էի քեզ կանչում։

Պետրոսի բարձրացրած աղմուկի վրայ հաւաքուեցին պարապ մարդկանց մի պատկառելի բաղմութիւն, որոնք կլորիկ շրջան կազմելով ուշադրութեամբ հետեւում էին կենտրոնում կատարուող գործողութեանը։

—Էս ինչ ես առել, —հարցրեց Երեցփոխը, պօրինջանները շօշափելով։

—Սկի, մի պուճուր պօրինջան առայ, —պատասխանեց Յարութը այնքան ցած ձայնով, որ միայն Պետրոսին լսելի լինէր։

—Ի՞նչ ա, բարձրաձայն հարցրեց Երեցփոխը, արհամարական կերպով բերանը ծռելով ու աշքելու սաստիկ կուչ ածելով։

—Պօրինջան ա,—ստիպուած եղաւ բարձր ձայնով  
կրկնել շշկուած թարութը:

—Քանիսով առար:

—Ֆունտը հինգ կոպէկ:

—Հը՞, բարձր խօսիր, չեմ լսում:

Յարութը աչքերը քաշ դցեց և արեխի բթով գետինը չանդուելով բարձր կրկնեց:

—Ֆունտը հինգ կոպէկ:

—Լոեցէք, այ մարդիկ, —ասաց երէցփոխը կըռաները կողքին կանթելով և ունկնդիրների գէմքերի վրայ զարմանքի արտայայտութիւն որոնելով, —ֆունտը հինգ կոպէկ:

—Պա, պա, պա, —բացականչեցին զանազան կողմերից, —կրակի գին ա, տօ:

—Բաս, —շարունակեց Պետրոսը, —Ծուիկենց Վարդանի տղին ֆունտը հինգ կոպէկով պօրինջան ա առնում ուտում, Աստուած կը վերցնի:

—Տը՛, տը՛, տը՛, —արտասանեցին մի քանի բերաններ:

Յարութը հաղաց, յետոյ թուքը կու տուեց և գլուխը բարձրացրեց որ մի երկու խօսքով իրան արդարացնի, բայց հէնց որ նրա աչքերը հանդիպեցին անողոք դատաւորի այլող հայեացքին, խեղճը բոլորովին շփոթուեց, անելիքը մոռացաւ և ըթի տակ մի բան կմկմացնելուց յետոյ էրի աչքերը քաշ դցեց և ուռենու ճիւղերի խաղացող ստուերներին նայեց:

Փոքրիկ Աւէտը մնացել էր գդակը ձեռքին հօր փէշի մօտ բռնած ու ջիրիդի երգը շրթունքների վրայ սառած: Նա իր պլած աչքերի երկչոտ հայեացքը Պետրոսի կնճուոտ գէմքին ուղղելով աշխատում էր հասկանալ, թէ ինչու էր բղաւում չար ալեորը և ինչից էր այնպէս վախում իր խեղճ հայրիկը:

—Գիտէք ով ա սա, —որոտաց երէցփոխը շրջապատողների ուշադրութիւնը Յարութի վրայ հրաւիրելով, —լաւ մտիկ արէք, սա էն Յարութն ա, որ տասներ-

կու տարի սրանից առաջ վող ապարաք արել, տարել պսակուել ու մինչեւ էսօր պարարը չի տուել... Լսում էք,—ասաց Պետրոսը և մի վայրկեան լոեց, համակրական ցոյցերի սպասելով:

—Ե՞հ, նամուսից զուրկ մարդ ա էլի, —ասաց մուխ-սի Մարգարը բոնոթու փոշին քիթը քաշելով, —Եդ տեսակ մարդկանց երեսին կուղես օրը տասն անգամ թըիր, նրանք կասեն՝ թէ անձրեւ ա դալիս:

—Ախպէր, չափը ճանաշելը լաւ բան ա, —վրայ բերեց մի ուրիշ ծերունի, որ ՅՅ տարի շարունակ դինեա վաճառութեամբ էր պարապել, —մի մարդ որ պարար ունեցաւ՝ նրան չի սազի ուտելիսմելը:

—Սիրուն կնկայ ծոցին բնելն անոնց ա, հա, —դարձաւ երէցփոխը Յարութին, —իսկ պարաք տալը...

Այդ լպիրշ խօսքերը Յարութի բոլոր ջղերը ցնցեցին. նա աչքերը բարձրացրեց և մի խղճալի հայեացը դցելով ունկնդիր գիւղացիների վրայ, կասես պաշտպանութիւն էր աղերսում նրանցից:

Բայց ամենքը լուռ էին և խօսողն էլի եղաւ Պետրոսը:

—Պօրինջանը լաւ բան ա, —ասաց նա Յարութի երեսին նայելով, համեղ, թթուաշ, իմ սիրան էլ ա շատ ուզում, ամեն միտս ընկնելիս բերմիս ջուրը զնում ա, բայց ինչ կանես, ոյժս չի պատում որ մի քիչ առնեմ. իսկ դու, քենթիկ շուն, գոզերով ես տուն տանում ու փողատիրոջ աչքերը հանում. Եդ Աստծուն դուր ա դամիս:

Յետոյ երէցփոխը ձեռը տարաւ չուխի տակ, մի կարմիր աղլուզ գուրս քաշեց գոտիկից և տաներից բանալով, մօտեցրեց Յարութի փէշին ու ասաց.

—Ածիր, ածիր, էդ պօրինջանը սրա մէջ ածիր, թող ես էլ տանեմ նուբարն անեմ:

Յարութի ամբողջ գէմքը գարնան պուտի պէս կաս կարմրել էր. նրա ականջները սկսեցին այրուել և բրտնքի խոշոր կաթիլները լայն ճակատից ծորան ծո-

րան հոսելով թուխ միրուքի վրայով գէպի դետին գլո-  
րուեցին:

—Պօրինջանը էսաեղ լցրու, անամօթ, գոռալով  
կրկնեց Պետրոսը:

—Ինձ համար չեմ առել, Պետրոս ամի, Աստուած  
վկայ, ես չեմ ուտելու...—գոգի բերանը ամուր սեղմե-  
լով, մերենայաբար պատասխանեց Յարութը:

—Գիտեմ որ բեղ համար չի, ես պիտի ուտեմ, ա-  
սում եմ ազգուզա լցրու, և նա քաշելով Յարութի փէ-  
շից ուզում էր զօռով խլել նրա գոգի պօրինջանը:

—Պետրոս ամի, գեղապետ ա, Աստուած սիրես,  
թող տանեմ, յացակրկնած ազաչում էր խեղճ ազքատը:

Բայց ամին չէր լսում. և Յարութը ատամներին  
հուզ տալով յուսահատական ճիգ էր թափում գոգի  
բերանը պաշտպանելու երէցփոխի կատաղի յարձակու-  
մից:

Տեսնելով հօր յուսահատ գրութիւնը զօրեղ հա-  
կառակորդի ճանկերի առջեւ և նկատելով նրա անօդ-  
նական խեղճութիւնը, Աւէտը բնազդօրէն առաջացաւ  
պաշտպանելու Յարութին, և իր մատաղ ձեռների բո-  
լոր զօրութեամբ ամուր բռնեց հօր գոգից:

—Կորիր, շան լակոտ, բզաւեց Պետրոսը կիսագլուխ  
ձեռնափայտը նրա գլխին շարժելով:

Սարսափահար երեխան ճշաց և աբադութեամբ  
փախչելով ամբոխի մէջ թագնուեց:

—Յարութ, ասում եմ քո կամքովը տուր թէ չէ...  
սպառնաց երէցփոխը:

—Պետրոս ամի, հիւանդի գեղապետ ա... ջրակա-  
լած աշքերը երէցփոխի գէմքին ուղղելով աղերսում էր  
Յարութը:

—Ասում եմ գոգիդ պօրինջանը տուր, թէ չէ, քո  
շուն հօրդ էլ ու հիւանդիդ էլ իրար կը խառնեմ, գի-  
տես: Տէր Աստուած, բեղ մեղայ:

Յարութը քարացել էր. շրջապատողներին տիրել  
էր ծանր ու հոգեմաշ լուռթիւն: Լուռ էին նաև մուխ-

սի Մարգարն ու դինեվաճառ Ալէքը. երեւի նրանց էլ դուր չէր գալիս չար երէցփոխի անսիրտ վարմունքը:

Եւ տասնաւոր բերաններից ծխի ամպեր էին բարձրանում դէպի ուռենու կանաչ կատարը:

— Երէցփոխ Պետրոս, թոյլ տուր թող տանի. դեղապետ ա, բան չը կալ, — հնչեց մօտիկից մի խրոխտքաս ձայն:

Վաշխառուն յօնքերը կիտեց և գլուխը բարձրացնելով անկոչ պաշտպանին որոնեց:

— Էդ դժու ես, խէլառ Տիկօ, — խորին արհամարհանքով արտասանեց երէցփոխը. — «Աման զնմանն սիրէ» ասում է աւետարանը, ախր դու էլ բարի պտուղ չես:

— Այ տնաքանդ, բա դու Աստուած չունես, — ըորբոքուելով գոռաց խելառը. ով ա տեսել որ դեղապետը մարդու ձեռից խլեն, ինչ անենք ո՞ր քեզ փող ապարտ. ախր վերեւից կրակ կը թափի:

— Թէ դու սրտացաւ, հոգեվախ մարդ ես, քո ջէրեց հանիր սրա պարտքը տուր, թէ չէ՝ լեզուդ քեզ քաշիր ու ձէնդ կտրիր:

— Ձէնս ինչպէս կտրեմ, այ անաստուած, ախր լերդաչոր հիւանդը աշըը ճամբին դեղապետի ա սպասում:

Այդ միջոցին շրջապատող գիւղացիների շարքերի միջից լսում էր Աւէտի աղեխարշ ողբը. իսկ Յարութը՝ ատամները սեղմած՝ հաղիւ էր զապում կոկորդը խեղդող արտասունքները:

— Բա էն երեխու աղի արցունքը սիրուդ չի այրում, հոգիդ չի ցաւեցնում, — շարունակեց խելառը, — Էդ շինքը ծուռ մարդի պաղատանքը բո գութը չի շարժում. պահ, պահ, պահ էդքան էլ անիրաւութիւն:

— Է՛հ, ախպէր Պետրոս, խեղճ ա, թող տանի, — համարեա միաձայն ասացին մօւխախն ու դինեվաճառը, — խեծ գեղապետը ուտել չի լինիլ:

— Խեղճ ա թող տանի, խեղճ ա, խեղճ ա, — լսուեցին չորս կողմից տասնեակ ձայներ:

Ընդհանուր խղճահարութեան այդ միահամուռ

արտայայտութիւնից յանկարծ փղձկուեց թարութի լցուած սիրտը և նրա կոպերը սկսեցին այրուել աղի արցունքի վարար հոսանքից:

Թարութը ամեն բան մոռացաւ. նա բաց թողեց չուխի փէշը և ձեռները աչքերին մօտեցնելով ուղեց թագցնել իր արտասունքը նայոնների հետաքրքիր հայեցքից, բայց տեսնելով, որ չի կարող, բոլոր թափով առաջ անցաւ և գիւղացիների կազմած շրջադիծը պատռելով, վազեց գէպի տուն:

Կոռւածալիկ գարձած պօրինջանները թարութի գոգից թափուելով ու կեղտոտ փողոցի հաստաշերտ փոշիների մէջ թաւալելով, զանազան կողմեր ցըռւեցին:

Երեցփոխը կուզը կախ՝ սաւնարիւն կերպով ժողովում էր հասած պօրինջանները, նրանց վրայի փոշին խնամքով մաքրում ու իր կարմիր աղլուխի մէջ դնելով, բեղի տակ ասում.

— Դուք չեք իմանում, դրանց պիտի մին մին էսպէս սիրուն դաս տաս, որ խելքի գան:

Թարութը չիմացաւ, թէ ինքը ինչպէս անցաւ մի բանի ծուռտիկ փողոցներ և մօտեցաւ իրանց տանը: Հասնելով գարպասի մօտ, նա կանգ տռաւ դռան առջեւ ու ինքն իրան հարց տուեց՝ «մտնել թէ՝ ոչ», բայց ինչ երեսով մտնել, չէ որ Մարանը աչքը դրանը դցած դեղապետի կը լինի սպասում. ինչ ասել նրան, ինչպէս խարել այդ լերդաշոր հիւանդին... Զէ, աւելի լաւ է դեռ մի քիչ նստել:

Եւ նա նստեց առուի կողքին, ջրիցքի մեծ բարի վրայ: Խորունկ առուի վարար ջուրը ուժգին հոսանքով վազում էր առաջ ու հին կամուրջի փթած փայտերը հեալով լիզում: Նրա պարզորակ մեղմ ալիքները թեթև յորձանքով գնում էին գալիս ու զարնուելով ջրլցքի քարին, աշխատով պարում, խնդում, ծափ տալիս:

Առուի կողքին, լեռբարերի արանքում բուսել էր ձմերուկի մի հիւանդոտ թուփի, որի գունատ տերեները դողդողում էին ջրի հետ եկող գուրենկան հո-

վից Մի լոպէ Յարութիւն ուշադրութիւնը գրաւեց կամուրջի ստուերում բուսած այդ արևազուրկ, գալիքացած բոյսը, որի խղճալի տեսքը ակամայ յիշեցրեց նըռան իր հիւծուած ամուսնուն:

Եւ այդ վայրկեանին նրան թուաց, թէ լուսմ է դռան յետելից գժբախտ հիւանդի ծանր տնքոցը:

«Երկի խեղճը գեղապետի է սպասում» մտածեց Յարութը և մի և նոյն ժամանակ նրա պղտորուած սրտում մի տարօրինակ փափագ առաջացաւ. ախ, ինչը բան լաւ կը լինէր. եթէ կամուրջի հովում տնկուած այդ հիւանդ ու նուազ բոյսը պօրինջանի թուփ գառնար, կանաչէր, փարթամանար և առասպելական արագութեամբ աճելով հէնց իսկոյնեեթ հասնէր, պտուղ տար ու նրա գալար ճիւղերին կպած կարմիր ու կանաչ պօրինջանները առուի վրայ կախուելով սառնորակ ջրի բիւրեղային կոհակների մէջ լողային...

—Էղքան էլ անիրաւութիւն... լոււց հեռուից խելառի բանձրագոչ ձայնը, որը հանեց Յարութին մտքերի երազական աշխարհից:

Նա ճակատը շիեց, զով ջրով լուացուեց ու փոքր ինչ թարմանալով սկսեց մտածել, թէ տեսնես ով հաւաքեց իր գողից թափուած պօրինջանները, ինչ ասաց իր յետելից երէցփոխ Պետրոսը և թէ ինչու է գեռ մինչև հիմա այդպէս բորբոքուած խօսում խելառը... Օ՛ֆ. ինչ անաստուած մարդ է էղ երէցփոխը... եւ նրա մտքում վերակենդանացաւ չարաբախտ պարտքի բոլոր պատմութիւնը իր սոսկալի մանրամասնութեամբ:

Բակի դուռը կամացուկ բացուեց և Սաթօն գըլուիր շէմքից հանելով ամաչկստութեամբ հօրը ձայն տուեց.

—Գնա, գալիս եմ, մեքենայաբար պատասխանեց Յարութը, բայց էլի մնաց տեղումը նստած. նրան զբաղեցնում էր այն միտքը, թէ ինչ պիտի պատասխանի Մարանին. ստել, խաբել նրան՝ չէր ուզում, իսկ ճշմարտութիւնը պատմել՝ ամաչում էր:

—Հայրիկ, հայրիկ, բացականչեց լացակվելնած Սաթօն կրկին անդամ՝ գուռը բանալով,—շուտ արա համիր, ես վախենում եմ:

Յարութը նստած տեղից ծլունդ եղաւ ու չնշառպառ տուն վազեց:

Մարանը կուրծքը բաց, գղղուած գլուխը գէպի յետ շրջած՝ տաքութեան մէջ զառանցում էր. նրա գէմու գէմ օջաղի միջի թէժ կրակներից կանաչ ու կապոյտ բոցեր էին բարձրանում:

Յարութը նստեց ամուսնու գլխավերեւը, իր նախկին տեղում և սկսեց ուռենու շիւերից կապած փունջը միօրինակ գանդաղութեամբ տար ու բերել նրա այրուող ճակատի վրայով:

—Մաթօ, Մաթօ,—բացականչեց հիւանդը առանց աչքերը բանալու,—մնդուկս փակիր, սպիտակ փողս ըստողնան... վայ, խաս զաւլուզ ընկաւ առուն,—աւելացրեց նա և ձեռները մեկնեց առաջ ու լալագին ձայնով գոշեց «բռնէք, բռնէք», նա լրեց և մի վարկեան արագ արագ հեւալուց յետոյ պուշները շրպպացրեց. նա ջուր էր ուզում: Հոգատար ամուսինը կնոջ ցանկութիւնը կատարելուց յետոյ, մի շորածին էլ սառը ջրում թրջելով Մարանի այրուող ճակատին գցեց:

Մարանը աչքերը կիսով չափ բացեց և երկար ժամանակ ապուշ ապուշ Յարութին նայելուց յետոյ հարցրեց.

—Դեղապետս բերիր:

Ամուսինը լուռ էր ու ջարդուած,

—Յարութ, պօրինջանը բերիր, գէ խորովէք, շնոր, ասաց նա և աչքերը խփելով շարունակեց հեւալ:

Յարութը դտակը յօնքերի վրայ իջեցրած՝ լուռթեամբ արտասունը կուլ էր տալիս և ուռենու թոռոմած փունջը անընդհատ տար ու բերում:

Մարանը իր կարմրատակած աչքերը բանալով, օջախի թէժավառ կրակին նայեց ու բացականչեց.

Աղջի, Սաթօ, այլուեց, այլուեց, պօրինջանը  
կրակի վրայ այրուեց, վրայ հասիր, շնւտ:

Յարութը հեկեկանը դժուարութեամք զսպելով  
փոխեց նրա դլախ սառը շորը:

Հիւանդը իր սարսափելի աչքերը մէկ էլ բացեց,  
նրանց թունալից հայեացքը Յարութին ուղղեց ու կար-  
կամելով սսաց.

—Ինչո՞ւ պօրինջանը չառար, հը՞, անիրաւ մարդ...  
ուզում ես որ անդեղապետ մեռնեմ հա, լաւ, լաւ...  
դէ երեսս աղօթարան... վերջին բառերը սառեցին նրա  
պապանձուած շրթունքների վրայ: Հիւանդի այլակերպ  
դէմքը աւելի ու աւելի սպրդնեց և մեծ աչքերում վա-  
ռուող կրակը կամաց կամաց մարել սկսեց:

—Անիրաւներ... մի անգամ էլ շշնջաց հոգեվարքի  
մէջ տառապող հիւանդը իր փակուած ատամների ա-  
րանքից, և լոեց ընդմիշտ... Յարութը մի ցաւոտ ճիչ  
արձակեց և հեկեկալով կռացաւ նրա սառը դէմքին:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ